

տղուՆ դանակէն: Տեսնել հարիւր մէկ տարուան «Սիւ-
լէյման Էֆէնտի» վէպը, որ ներկայացուցիչն էր Աստուծոյ
Շուքին (Համիտ) ու... պապենական բարեկամութեամբ
կապուած էր գիւղապետին ընտանիքին, իր աղքատու-
թեան օրերուն վայելած անոր պաշտպանութիւնը. ու
այդ բարիքը երդում ըրած ո՛չ միայն չմոռնալ, այլեւ վճա-
րել տարուէ տարի...: Ժամանակները անցեր էին: Քէլ-
էտհէմը օր մը մեծահարուստ, ազարակներու տէր,
արիւնկզակ բռնաւոր: Անիկա մնաց հաւատարիմ իր
տկլոր օրերու երդումին ու ջարդերու կազմակերպու-
թեանց ծրագիրները այդ գեղին վրայէն չըջել յաջողուց,
երկրորդաբար, հակառակելու համար կառավարական
չըջանականերուն - ջոլիքը պաշտօնէութեան եւ հասառու
ճահիճներուն- անյազուրդ որկորներ, որ տասը տարին
անգամ մը լիայագ կ'ըլլան... կողոպուտով: Ով որ պիտի
գրէ ԺԹ-ը դարու թուրքերու պատմութիւնը, պարտա-
ւոր է նկատի ունենալ սա տարրական ու տրտում
ճշմարտութիւնը.- շատ քիչ բացառութեամբ պաշտօնէու-
թիւնը թուրքերուն համար վարչական եղանակ մը չէ,
այլ՝ վաչկատուն բնազդներուն վերադարձի առիթ մը:
Այդ է պատճառը, հարստահարութիւնը անոնց համար
բարձ է, որմէ չեն նեղուիր: Էտհէմ պէյը ընդդիմացեր էր
քեաթիպ, միւսթանթիք, Ժանտարմա եւ Պոլսոյ հարիւրա-
պետ էֆէնտիներուն, պէյէրուն կազմակերպել ուզած
ջարդին: Չարագործը, վաւերական ու կատարելատիպը,
բնազդական արհամարհանք ունի, կիսակիրթ, անվաւեր,
համբակ տիպարներուն հանդէպ: Այդ խմբակին մէջ յիս-
նապետի մը կնիկը, փախած էրկանը քովէն՝ կ'ապրէր պէ-
յին ազարակը ու հակառակելու համար իր էրկանը, մղած
էր Էտհէմ պէյը ընդդիմադիրի գերին: Այդ խմբակին մէջ
գազալին գանձապետը, որ իւրացուցած քանի մը հարիւր
ոսկիին համար ուզած էր երաշխաւորուիլ գիւղապետէն
ու մերժուելուն վրայ, պաշտօնանկ՝ ամբաստանած էր
զայն իբրեւ յեղափոխականներու դրամ հանգանակող,
անշուշտ առանց փաստի: Գիւղապետին բարեկամ պէյը